



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 օգոստոսի 2017 թվականի N 945 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1313-Ն որոշման NN 5 և 11 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N 1, 2 և 3 հավելվածների:

2. Գյուղատնտեսական հումքի մթերումների (զնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման նպատակով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը 2017 թվականին հատկացնել 70,422.0 հազ. դրամ, այդ թվում՝ 2017 թվականի ինն ամսում 18,345.0

հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ պետական ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով):

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1313-Ն որոշման 26-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում» պիլոտային ծրագրի իրականացման համար 70,422.0 հազ. դրամը հատկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. օգոստոսի 10
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 3-ի N 945 -Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման			Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)	
միջոցառում	խումբ	դաս		ինն ամիս	տարի
1	2	3	4	5	6
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	0.00	0.00
			այդ թվում՝		
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	(70,422.00)	(70,422.00)
			այդ թվում՝		
	02		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	(70,422.00)	(70,422.00)
			այդ թվում՝		
		01	Գյուղատնտեսություն	(70,422.00)	(70,422.00)
			այդ թվում՝		
			<u>16. Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար</u>	(70,422.00)	(70,422.00)
			ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		
			որից՝		
			Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին	(70,422.00)	(70,422.00)
11			<u>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍԱՑԻՆ ՖՈՆԴԵՐ</u>	70,422.00	70,422.00

1	2	3	4	5	6
			այդ թվում՝		
	01		<u>ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ</u>	70,422.00	70,422.00
			այդ թվում՝		
		01	<u>ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ</u>	70,422.00	70,422.00
			01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ		
			ՀՀ կառավարություն	70,422.00	70,422.00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 3-ի N 945 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.14 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
		ոչ ֆինանսական ցուցանիշներ		ֆինանսական ցուցանիշներ	
		ինն ամիս	տարի	ինն ամիս	տարի
<p><u>ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները</u></p> <p><u>1. Քաղաքականության միջոցառումներ</u></p> <p><u>1.2. Տրանսֆերտներ</u></p>					
Ծրագրային դասիչը		<p><u>Մատուցվող ծառայության անվանումը</u> Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար <u>Նկարագրությունը</u> Հողօգտագործողներին ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի մատչելի գներով տրամադրում</p>			
1022	ԾՏ03				
Շահառուների քանակը		Համայնքների քանակը			

Շահառուների քանակը	Ծրագրից օգտվող տնտեսվարողների թիվը				
Գումարը (հազ. դրամ)		X	X	(70,422.0)	(70,422.0)
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը (անգամ)			1		
<p><u>Շահառուների ընտրության չափանիշները</u> Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով ընտրված մարզերի հողատերեր <u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u> 1022 Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր <u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u> Գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում, օգտագործվող վարելահողերի ավելացում՝ այն հասցնելով ամբողջ վարելահողերի շուրջ 82.7%</p>					
Ծրագրային դասիչը		<p><u>Մատուցվող ծառայության անվանումը</u> Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում <u>Նկարագրությունը</u> Պտուղ-բանջարեղենի և խաղողի մթերումների (գնումների) կազմակերպման նպատակով ագրովերամշակող ընկերություններին մատչելի պայմաններով վարկերի տրամադրում</p>			
1022	ԾՏ07				
Շահառուների քանակը	Պտուղ-բանջարեղեն և խաղող մթերող (գնող) վարկառու սուբսիդավորվող ձեռնարկությունների թիվը (շուրջ)	20	20		
Գումարը (հազ. դրամ)		X	X	18,345.3	70,422.0
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը (անգամ)			1		
<u>Շահառուների ընտրության չափանիշները</u>					

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագրի պահանջներին համապատասխան
<u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u> 1022 Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր <u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>
5- 7 տոկոսով կբարձրանա ծրագրի շահառու-վարկառուների կողմից գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի մրցունակության մակարդակը, որի արդյունքում կավելանան վերջիններիս կողմից գյուղատնտեսական մթերքների մթերումների և դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի արտադրության ու արտահանման ծավալները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ
 N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառնական դասիչը	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Գումարը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) (հազ. դրամ)
ծրագիրը	միջոցառումը	(բաժինը/խումբը /դասը)		
1022			ԾՐԱԳԻՐ	
			Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր	
			<u>Ծրագրի նկարագրությունը</u>	
			Համայնքներում գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցության տրամադրում:	-
			<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>	
			Գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների	

			ավելացում	
			Քաղաքականության միջոցառումներ. տրանսֆերտներ	
ԾՏ03	04,02,01		Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար	(70,422.00)
			<u>Տրանսֆերտի նկարագրությունը</u>	
			Հողօգտագործողներին ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի մատչելի գներով տրամադրում	
ԾՏ07	04,02,01		Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում	70,422.00
			<u>Տրանսֆերտի նկարագրությունը</u>	
			Պտուղ-բանջարեղենի և խաղողի մթերումների (գնումների) կազմակերպման նպատակով ագրովերամշակող ընկերություններին մատչելի պայմաններով վարկերի տրամադրում	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ